

1107-1109

19. 41.

Ճ 9-րդ ամաց 4-ի 11.

Բ թուղթաց ամաց

880
880-44.
790-04

13 - 92 ա.

340

110-28 110-28
110-28-106-73 105-08
706-88 3-55 5-20
3-85 106-73
110-28

110-28
106-88

3-50

190/ամաց

Ապրիլ ամաց

Հ 4.



Դ յ ն

1999

ՀԱՅՈՒԹ ԱԳՐԱՐԻ



ԹԱՐԳՄԱՆՄԱՆ ԹԱՐԳ



16/4

Ա Յ

Մ Ա Ս Կ Ա Խ Ե

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՏՊԱՐԱՆԻ Օ. Օ. ՀԵՐԵՎԱՆ.

1886.


Дозволено цензурою. С.-Петербургъ, 12 Апрѣля 1886 г.



41107-60

28. 1108

Типографія О. О. ГЕРВЕКА, Чернышевскій пер. д. № 5.



Եա որ հրզօր, զիւմիչ գրչով
Հայի հոգին բաց արեց
Եւ սրտառուչ ազատ երդով
Մեղ խինդ եւ լաց պատրաստեց,

Թող եւ այսօր մնչեցընէ
Իւր մեղեղին համարձակ,
Արի ծայնով թնդացընէ,
Հայ աշխարհը բովանդակ:

Եւ կենդանի այն վառ քարող
Անշահ սիրոյ, տուրբ գործի,
Խնչպէս վըտակ կարկաչանու,
Թող ամէն տեղ տարածուի:

Թող խօսքն յստակ եւ անկաշառ
Ոյժ տայ թոյլին հանապազ,
Քաջին բաշխէ հաւատ պայծառ,
Եռանդ ու խանդ աննուազ:



ՀՅՈՒՈՒ ԱՔԱՂԱՂ.

(MELEAGRIS GALLOPAVO).



Ցանկի վերայ կանգնած էր մի
հնդու աքաղազ և նայում էր
մօտից անյնող խողերի վերայ:
Պէտք է ասած, որ այդ հնդու աքաղազը իւր
տեսքով այնքան էլ տգեղ չէր: Մոխրագյն
բծելով ծածկուած նորա սպիտակ փետուր-
ները սաղափի պէս փայլում էին. բբուկը
(սանտրը) և մօրուսը կամ, ինչպէս ասում
են, աղեքը բոլոր դպացի հնդու հաւերի կար-
ծիքով փայլում էին կրակի ամենագեղեցիկ
կարմիր գոյնով: Ըստ լաւ իմանալով իւր ա-
ռաւելութիւնները, նա վայելուչ վսկեմութեամբ
ու խրոխառութեամբ էր նայում ցածում թա-

ւալող անասունների վերայ: Փռեց նա պոչը
հրվահարի ձեռվ, ինչպէս սիրամարդն է ա-
նում, և սկսաւ գոռող հայեացքով անց ու դարձ
անկել ցանկի վերայ և մտածել ինքն իրան:

— Տես, թէ աշխարհումն որպիսի անարդ-
ուած արարածներ կան: Օրինակի համար
հէնց այս խոզերը: Կյտ խեղճ ողբրմելները
անդամմի փետուր էլ չունին: Աամայ-ակամայ
ստիպուած են իրանց մերկութիւնը ծածկել
մի տեսակ կոշտ-կոպիտ ու դժգոյն մավերով:
Իայց ոլքան անախորժ է նոցա խօսակցու-
թիւնը: Մեղ պէս աղնիւ զղղացնելու տեղ,
նոքա աալորինակ ու խուլ կերպով խանջում են
և խրխոռում: Խւ այդ բոլորից յետոյ վայելուչ
պոչի տեղ թոկի կտորի պէս մի բան ունին:

Պոչը փռելով, ինքն էլ փքուելով նա կա-
մենում էր ցոյց տալ խոզերեն, թէ ինչպէս
պիտի լինին իսկական պոչերը, և զղղացնում
էր, որ ցոյց տայ նոցա միակ վայելուչ և իս-
կապէս միակ ներդաշնակ խօսակցութիւնը:

Իայց խոզերը չէն էլ մտածում, որ իրանց
վերայ այդպէս խղճալով էին նայում: Նոքա
թաւալում էին ցեսի, քարերի և ցանկի մօտ

թափած աղբի մէջ: իսկ յետոյ նոցա քշեցին
մեր հնդու աքաղաղի տիրոջ ախոռու:

Եւաղ, հետեւեալ օրը մեր հնդու աքաղաղին
դրին կողովի մէջ և ուրիշ հաւերի, սագերի
ու բագերի հետ միասին տարան շուկան վա-
ճառելու: Նոյն իսկ սայրակի վերայ, հէնց նո-
րա կողովի մօտ, պառկած էր մի գորշ խոճ-
քոր, որի ոտնելը այնպէս պինդ էին կապել որ
խեղճը մինչեւ անդամշարժուել չէր կարողանում:

— Խղճում եմ սորան, խղճում, — մտա-
ծում էր մեր հնդու աքաղաղը: — Եսպիսի
խայտառակ պոչ ունի, կրկն ապրել է ուղում:
Երևի, սորան այժմ տանում են մօրթելու:
Իայց աղնիւ հնդու աքաղաղիս հետ բոլորո-
վին ուրիշ տեսակ են վարվում: Եստեղ էլ
և նոցանից ջոկ եմ նստած, բարձր կորցիում,
ասես, թէ գահի վերայ լինիմ բաղմած: Կար-
ծեմ, ինձ տանում են պալատ թագուհուն
ցոյց տալու: Նա, երեխ, իւր կեանկըումն էլ
տեսած չի լինիլ այսպիսի նշանաւոր թռչուն:

Եյսպիսի մնոտի յշյելով մեր հնդու
աքաղաղը նորից ցցեց իւր պոչը, կախեց կար-
միր աղեքը և սկսաւ զղղացնել որպան ցիր-

պատում էր: Տարաբաղդաբար այդ իսկ լոսկերն սայլի անիւր փոռն է ընկնում: սայլը սաստիկ շարժվում է, և կողովը հնդու աքաղաղն էլ հետք միասին մի կողքի վերայ ևն ընկնում:

— Բարձրաստիճան մարդկանց վերայ էժան չէ նստում աշխարհումն ձեռք բերած իրանց բարձր դիրքը, — ինքն իրան միսիթարում էր հնդու աքաղաղը, աշխատելով ամուր բըռնուիլ գործած կողովից և պահպանել մի ազնիւթանի վայել վսեմ դիրքը:

Հաւերը, սագերն ու բագերը, ինչպէս էլ վայելում է ամբոխն, նստած լինելով հասարակ կողղնելում, համարեա զզգացին էլ այն հարուածը, որ գորից դահից հնդու աքաղաղին:

— Լաւ հնդու հաւ չէք գնիլ տիկին: Նայեքը, տեսէք, ինչպէս գէր է: Երեք ամսից մօրթելու լաւ ժամանակը կըլինի, — սասց տէրը, կանգնացնելով սայլը և բարձրացնելով կողովը ցցյց տալու մեր հերոսին տան պատշգամբի վերայ կանգնած տիկնոջը, որի մօտից անցնում էր:

— Ինձ.... ուղում են մօրթել, — բացականչեց հնդու աքաղաղը և անզգայ ընկաւ կողովի յատակի վերայ:

Համարեա թէ ամենայն օր նա ականատես էր լինում, ինչպէս ընտանի կենդանիները և թռչունները անժամանակ զոհ էին գնում մարդու անգութ դանակին, բայց երբէք չէր մոտածում, որ ինքն էլ կարող է այդ օրին հասնել:

— Ո՞ի անհանգստանալ, մեզ երկուսիս էլ կըմորթեն, — մրժմրժաց խոճքորը՝ ծաղցելով հնդու աքաղաղին, որ արդէն ուշքի էր եկել:

— Հապա ինչո՞ւ համար էին նոքա ձեզ կերակրում: ։ ։ ։ ձեզ շատ սիրելուց չէ: Ներելի լինի, եթէ ասեմ, որ միայն հնդու աքաղաղը կարող է այդպիսի ցնորներով զբաղուիլ:

— Շմարիտն ասեմ, ես կարծում էի, որ ինձ նորա համար էին կերակրում.... նորա համար, որ ես հնդու աքաղաղ եմ, հառաջելով պատասխանեց նա իւր կողովից:

— Ռըմ, — պատասխանեց խոճքորը, — կարծես, թէ գուք չէիք իմանում, որ մարդիկ ամեն տարի ձեզանից հարիւր հազարներով են ուտում: Համարձակ կարող եմ հաւատացնել ձեզ, որ Օննդեան տօներին մեր երկուսիս վեցն էլ կտրած կըլինի:

Խեղճ հնդու աքաղաղն ահ ու գողից կրկն

ուշաթափ եղաւ և այս անգամ անզգսց առա-
ւել շատ մնաց պարկած։ Հէնց այդ միջոցին
սայլը հասաւ շուկան։

Երբ հնդու աքաղաղը նորից ուշքի եկաւ,
ձին սայլից արդէն արձակած էր, տէրն էլ
գնացել էր մի տեղ իսկ սայլի վերայ մնացել
էին կապուած խոճքորը և հնդու աքաղաղը։

Յանկարծ խոճքորն այնպէս սաստիկ խան-
չեց, որ հնդու աքաղաղը որի նեարդերն ա-
ռանց այն էլ գրգուած էին, վեր թռաւ։

— Ի՞նչ անախորժ ձայն ունիք, — կշտամբե-
լով նկատեց նա իւր գժբախտակից ընկերնեն։ —
Ի՞նչ կրկնէր, եթէ դուք էլ սովորէիք ինձալէս
զլզայնել։

Իւ նա սկսաւ ցոյց տալ որքան ոյժը նե-
րում էր։

— Ես կարող եմ ձեզ նկատել որ ձեր ձայնն
խիցը լաւ չէ, — ասաց խոճքորը, — բայց այժմ
ժամանակ չէ վիճելու թէ որիս ձայնն է ա-
ւելի դուրեկան։ Եթէ դուք չէք մերժիլ փոքր
ինչ ինձ օգնել, այն ժամանակ երկուսն էլ
ողջ և առողջ կ'ազատուենք այստեղց։

Հնդու աքաղաղը չկարողացաւ մի անգամից

պատասխանել։ Ո՞ի կողմից նա շատ էր կա-
մենում ազատուիլ կողովեց, բայց միւս կող-
մից ընկերանալ այդպիսի մի անարդուած կին-
դանու հետ, ինչպէս խոճքորը, այնքան էր
վերաւորում նորա ինքնասիրութիւնը, որ նա
բոլորովին չէր կարողանում հարցնել թէ ինչ
պէս է կամենում իւր անկոչ ընկերը աղատ-
ուիլ գերութիւնից և ուրիշին աղատել։ Ի-
րեբախտաբար խոճքորը, որպէս մի նիւթա-
պաշտ և գործնական խելք ունեցող կինդանի,
այնքան էլ նշանակութիւն չէր տալիս քաղա-
քավարութեան կանոններին։ Տեսնելով, որ
հնդու աքաղաղը յամառութեամբ լուսութիւն
է պահպանում, նա շարունակեց.

— Իմ դունչը կրհաննէ ձեր կողովին։ Ես
կըկրծեմ, հեշտութեամբ ծակ կըբանամ, մա-
նաւանդ որ ուռից է շինած։ Ի՞այց դուք
կտցահարելով կրկտրէք ոտներիս թոկը։ Հ՞...
Հասկացնք, բանն ի՞նչ տեղ է։

Այդ խօսքերից այնպէս ուրախացաւ հնդու
աքաղաղը, որ ազնուտկան հպարտութիւնը
մոռացութեան տուաւ։ Ուրախութիւնից ին-
քըն իւան կորցնելով նա սկսաւ զուարձանալ,
թեկը թափ տալ։

— Շուտով միայն, — սասաիկ բացականչեց հնդու աքաղաղը, այնպէս որ արխւնը բբուկը տուեց:

— Խնդրեմ, աղմուկ չհանէք. ով գիտէ, մէկը կարող է այստեղ լինել, — միթմիթաց խոճքորը, աշխատելով կրծկը ուռի Ճիպուներից գործած կողովը: — Են ժամանակ երկուսս էլ կարող ենք այս արիւնածարաւ որկրամուների կերակուրը դառնալ: Կարող եմ հաւատացնել որ նոքա շատ են սիրում անզիացիների էլդէրմէնի կերակուրը:

— Խնչպէս, էլդէրմէնի:

— Ամ եթէ առաւել պարզ ու որոշ ասելու լինիմ — տապակած հնդու հաւ երշիեներով, — մեկնեց խոճքորը:

Հնդու աքաղաղը բարկացած շուռ եկաւ: Եյս կատակը նորան դուր չեկաւ:

Այդ միջոցին խոճքորը անընդհատ աշխատում էր ատամներով: Նա շուտով այնպիսի մի մեծ ծակ բացեց, որ հնդու աքաղաղը կարող էր նորանից գուրս հանել միայն գլուխը, յետոյ վեզը և վերջապէս ողջ մարմինը: Ուրախութիւնից նա մի քիչ զլլացրեց, թէպէտ

շատ լաւ գիտէր, որ այդպէս անելը այս լուպէին շատ վասնգաւոր էր:

— Արձակեցէք շուտով ոսներիս թոկը, — խանչեց խոճքորը:

Հնդու աքաղաղը շատ կրկամենար առանց յետ նայելու փախչել հեռու, հեռու տեղեր, բայց աղնիս և բարեխիղջ թոշնի պարտականութիւնը թոյլ չեր տալիս նորան թողնել իւր կաշկանդուած ընկերին: Նա այնպիսի աշխատութեամբ էր կտցահարում թոկը, որ զզդզուած թոկի կտորները դէս ու դէն էին թոչկոտում: Մի քանի լոպէից խոճքորը թռաւ սայլց գետին: Նա արդէն ազատ էր:

— Դէհ, արի՞ փախչենք, — ինդութեամբ խանչեց խոճքորը և սկսաւ վազէվազ փախչել:

Յայտնի է, որ խովերը հարկաւոր ժամանակը շատ արագ են վազում: Հնդու աքաղաղի թևերը կտրած էին, այդ պատճառով էլ նա չեր կարողանում թոչել բացի դորանից առ հասարակ ընտանի հնդու հաւերը լաւ թոչելու շնորհք չունին: Բայց կրկին նա ստոստերով վազում էր և համարեա յետ չեր

մատում խոճքորից: Աս լաւ ծանօթ լինելով շոր-
ջակայքին, շուռ տոռեց դէպի խճուղին, որ
տանում էր դէպի ցանկալի անտառը: Իւ-
րիբազգաբար մեր փախստականները յաջող
ու առանց փորձանքի տեղ հասան: Ոչէպէտ
անտառը շուկայից մի երկու վերատ էր հե-
ռու, բայց նոքա վաղելու տովոր չլինելուց բա-
ւականին յոդնել էին, ուստի ուրախութեամբ
երկուան: Էր պարկեցին դալար արօտի վերայ,
սաղարթախիտ կակինու ստուերի տակ:

— Իորդովին անպէտք ծառ է, — միթըր-
թաց խոճքորը, — ինչքան էլ մեծանում է,
կրին կաղին չէ տալիս:

Խոճքորի աչքում ծառերը գնահատելու
համար բնականաբար կաղինները լաւ չափս
կարող են լինել:

— Ինչի՞ս է պէտք կաղին: Ես չեմ ու-
տում, — տխուր ընդհատեց հնդու աքաղաղը:

— Չեր կողմից դա խելք բան չէ, — պա-
տասխանից խոճքորը: — Իայց մենք երկուսս
էլ ապերախտ արարածներ պիտի լինինք, որ
խօյն ուտելու վերայ մտածենք: Պէտք է ու-
րախ լինինք, որ ազատուեցանք անխուսա-
փելի վտանգից:

— Դուք համոզուած էք, որ մեզ այլ ես
վտանգ չէ սպառնում:

— Գոնէ առ ժամանակ, — պատասխանեց
մեր փիլխոփայ խոզը: — Քանի մեզ չեն գտել
մեզ համար անտառում դեռ զատիկ է: Եթէ
դուք չէք սիրում կաղին — կարող էք որոնել
ձեզ համար սերմեր, պտուղներ կամ ուրիշ
ուտելեղին: Հաւանական է, որ այստեղ մի բան
կըդանուի:

Խոճքորը չէր դժուարանում փիլխոփա-
յութիւններ անել որովհետեւ արօտի վերայ
պարկածնա զգում էր, որ մօտելքում՝ մամոխ
մէջ, շատ լաւ գետնախնձոր կայ:

— Երբէք ես չէի կարծում, որ երբ և իցէ
կարօտ կըլինիմ օրական կերակրիս, — ախ քա-
շելով ասաց հնդու աքաղաղը:

— Ո՛իթէ դուք երազում էիք, որ ձեզ 'ի
զուր տեղը կըկերակրին: Ո՛չ դուք այնպիսի-
ների ձեռքը չէք ընկիլ: Ճշմարիտ է, մարդիկ
ձեզ կերակրում են, բայց կերակրում են միայն
մոլթելու համար: Խսկ այստեղ դուք ոչինչ
կարօտութիւն չպիտի ունենաք կերակրի: Օրի-
նակ առէք ինձանից — որոնեցէք և անուշ

արէք,—աւելացըրեց խոճքորը, ախորժակով
լսիելով անուշահամ գետնախնձորներ:

— Առվը,—ինչպէս ասում են, — երկսայրի
սուր է. ուստի մեր հնդու աքաղաղը դէս ու
դէն ընկաւ կուտ ձարելու, որպէս զի սովից
չատիկի: Բնտանի հնդու հաւերը հարկաւո-
րութիւն չունին իրանց համար կուտ ձարե-
րու: Նոցա առենայն օր կերակրում են, և մեր
վէպիկի հերոսը մանկութիւնից արդէն հաս-
տատ համոզուած էր, որ Նախախնամու-
թիւնն է սկզբից այդպէս սահմանել: Ակացին
կամաց - կամաց նորանում արծարծվում էին
բնական պահանջները, որ անկասկած, նա
ժառանդել էր իւր պապերից, որոնք երկու-
երեք դար սորանից առաջ վայրենի դրու-
թեան մէջ ապրում էին Միսսուրիի ափե-
րում կամ Երկանզասի կուսական անտառնե-
րում: Խրախուսուած ընկերի օրինակից, նա
սկսաւ ուշադրութեամբ նայել ու քրքրել թր-
փերը և գտաւ մի քանի ելակ ու մորի: Հըն-
դու աքաղաղը փորը մի քիչ նիւթ քցելուց
յետոյ բռնեց մի մեծ ձպուռ ու մի փոքրիկ
գորտ և ախորժակով կերաւ:

— Ես չեի կարծում, որ մեր ըլրս կողմը
այսքան շատ բան կայ ուտելու, — ասաց նա
կտուցը քերելով:

— Ուտելու բաւականին բան կըլինէր, —
դժգոհ պատասխանեց խոճքորը, — բայց ցա-
ւալին այն է, որ մարդ ամեն բան ինքն է
յափշտակել: Ձեզ՝ հնդու հաւերիդ էլ — որ
բնիկ ամերիկացի էք — կրկին մարդն է գտել
և բերել այստեղ ուտելու համար: Ի՞այց դորա
մասին գեռ մենք ժամանակ կ'ունենանք խօսե-
լու: Իսկ այժմ աշխատենք ծանօթանալ այս-
տեղի բնիկների հետ: Խւ ահա այստեղ է գա-
լիս մի շատ սիրուն փայտմորեկ: Ի՞արի՛ լըյա,
տիկին Տետրա Տետրիկս:

— Միթէ նորա անունը այդպէս է, —
հարցըրեց հնդու աքաղաղը:

— Այս նորա լատիներէն անունն է: Ձեզ
էլ լատիներէն ասում են Մէլէազիս Պալ-
լոպավօ, և շատ հաւանական է, որ դուք մինչեւ
օրս այդ չգիտէիք, — պատասխանեց հեզնորէն
խոճքորը:

— Հնդու աքաղաղը մտածմունքի մէջ

ընկաւ: «Նորան շատ դուր եկաւ իւր լատինիրէն անունը:

— Ինչպէս էք, լաւ էք ապրում այստեղի անտառում, Տեսրած Տեսրիքս, — այսպէս սկսաւ խոճքորը հարց ու փորձ անել փայտմորեկին:

Այս էլ ախ քաշելով պատասխանեց, թէ անտառը ինքն ըստ ինքեան վատ չէ և դաշտումն էլ օրը երկու անգամ հունդ են ցանում թռչունների համար: Վատ է միայն պյն, որ որսորդները և նոցա շները ժամանակամանակ խանդարում են մեր վայելութիւնները: Կոչ երջանկութիւն կարող են ունենալ նոքա, որոնց զլիսին կախած է որսկանի պայուսակը:

— Համարեա թէ համարձակ կարելի է ասել որ մսավաճառի սուր գանակը ինձ է ըսպասում, — պատասխանեց խոճքորը: — Եհ, հաստ ու բարակ մի գին է, ուստի ես աշխատում եմ, ոլքան կարելի է, լաւ ժամանակ անց կացնել: Դուք, կարծեմ, բարեհաճեցիք յայտնել մեզ որ այստեղ թռչունների համար հունդ են ցանում: Ի՞այց միթէ զըժ-

բախտաբար անտառապետի պահակը մօ՛տ է դտնվում:

Փայտմորեկը պատասխանեց, թէ անտառապետի պահակը ամենաշատը կէս վերստ հեռաւորութեան վերայ է:

Ուրեմն սա որսորդների սիրած տեղն է, — հարցրեց խոճքորը:

Փայտմորեկը դառնագին հառաջանքով պատասխանեց և հաստատեց նորա խօսքը: Յետոյ մատածմունքի մէջ ընկնելով, զլուկոր ցած ձգեց և անտառի մէջ թագնուեցաւ:

— Խակ ես կարծում էի, թէ եկել ենք մի մէծ անտառ, — խղճալով շարունակեց խոճքորը: — Վահ, մեզ մօտ է եկել ձինկուլը: Ինչպէս էք, պարո՞ն Ելքէդ:

Ձինկուլը աշխարհիս բոլոր արարածներից ամենաերկշոտն է, ամաշելով այս բարեկց, նա աշխատում էր շուտով հեռանալ նոցանից:

— Ինչո՞ւ համար էք դուք նոցա այդպիսի մէծ մէծ անուններ տալիս, — հալցրեց հընդուռ աքաղաղը:

— Կոցա այդ շատ դուր է դալիս. ես էլ հօ դորանից վասս ըռնիմ, — չոր չոր պատաս-

իսան տուաւ ընկերն և փոքր ինչ սպասելուց
յետոյ շարունակեց. — Մարդիկ դեռ չեն
բաւականանում այդպիսի շողզորթութիւն-
ներով: Ի՞այց ես տեսնում եմ, որ վայրենի ա-
զաւնին մեղ պատուել է իւր այցելութեամբ:
Ի՞արեւ եկաք, մեծապատիւ Տուրտուր Առ-
րիտուս: Մէնք իջել ենք ձեր կանաչագարդ
անտառը հանգստութիւն առնելու: Կարծես,
դրախտ լինի: Միայն այս է հարցը. արդեօք
ապահով էք դուք այստեղ:

— Միթէ ապահովութեան մասին կարող
է խօսել նա, որին առաւտեանից մինչև երեկը
հրացանում են հրացաներ, հրացաններ և հր-
ցաններ, — միւեց աղաւնին՝ նստելով մորե-
նու ոստի վերայ:

— Ի՞այց ես կարծումեմ, որ այստեղ այժմ
արգելուած է հրացանով որս անելը, — նկա-
տեց խոճքորը:

— Եյտ մեղ չէ վերաբերում: մեղ որսում
են և՛ հրացաններով, և՛ զանազան թակարդ-
ներով: մի խօսքով, մեղ հետ ամենաանողըք
կերպով են պատերազմում, ինչպէս մի թշնա-
մու կամ չարագործի հետ: Իրաւ է, մենք ու-

տում ենք հունդեր, հաւաքում ենք սերմեր
ու փոքրիկ խխունջներ, բայց, կարծեմ, դրա-
նով ոչինչ մնաս չենք տալիս այդ անխիղմարդ-
կանց. իսկ նոքա, ամեն մի յարմար կամ ան-
յարմար դիպուածում, մեղ միշտ սպանում
են: Ես մինչև անգամ լսել եմ, որ արտասահ-
մանում, Անգլիայում ու Փրանսիայում, մե-
րոնց երամնելով են բռնում, պոչերը վետում
և մի քանի տամնեակ միասին նստեցնում նեղ
ու խեղզուկ զամբիւղի մէջ: Յետոյ հաւաք-
վում են որսորդները և հրացան արձակելով
դուրս թռչող աղաւնու վերայ՝ զուարձանում
են: Ճշմարիտն ասեմ, ինձ անհաւատալի է
թուում, որ մարդիկ կարող են զուարձանալ
սպանութիւնով:

— Դ զուր էք աշխատում չհաւատալ, —
պատախանեց խոճքորը՝ դժգոհ դունքը վեր
ցցելով: — Ես արժանահաւատ աղքիւրներից
գիտեմ, որ մեծամեծները սիրում են այդպիսի
առնելի զուարձութիւններ, մինչև անգամ մըր-
ցանասկ են տալիս ամենահմուտ սպանողնն:
Գիտէք, նոքա անվայել են համարում այն-
պէս զուարձանալ, ինչպէս գիւղացի տղայքն

ևն անում, սոքա մեղ ճարպ ևն քսում, յետոյ ընկնում են մեր յետելից և աշխատում են բռոնել մեր պոչեց: Ինչպէս էք կարծում, մեծարդզ Տուրտուր Առուրիտուս, կայ արդեօք աշխարհում մարդուց անխիղջ, բարբարոս մի արարած:

— Կարծեմ, հազիւ թէ մէկը գտնուի, — պատասխանեց աղաւնին: — Ես էլ այստեղ միայնակեցի պէս ապրում եմ մի կաղղի գագաթին և բոլորովին երջանիկ կրլինէի, եթէ կարողանայի մի երկու անգամ՝ առանց կեանկս վտանգի ենթարկելու, ցած թռչել ուտելիսմելու համար:

Այդ միջոցին նոցա առաջ գուրս եկաւ մի լաւ կաքաւ իւր բաւականին մեծացած ձագուների՝ տղաների ու աղջկիների հետ: Այս չքնաղ տիկինը շատ հիանալի կրլինէր, եթէ միայն նորա ջղերը սաստիկ գրգռուած չլինէին:

Ուպէս նախատես տանտիկին նա ողջունեց հիւրերին, և իննոքը ար ուշադրութիւն չգարձնեն իւր փոքր ինչ տարօրինակ ձեւերի վերայ:

Խոճքորը բարեւեց նորան ուպէս տիկին Ստերնացիներիային:

— Գիտէք, — ասաց կաքաւը, — մինչեւ յուլիսի 15-ը ես ողջ մարմնովս դողդողում եմ ամենաշնչին շրջիւնից անգամ և իւրաքանչիւր քարը ես շան տեղ ևմ ընդունում: Այրտս աւելից ցաւում է ձագուներիս համար: Ի՞նչ կրլինի նոցա վիճակը երբ այս հովետում արձձի գլուդակները կարկտի պէս են թափսում: Ես միայն տեսնում եմ, ինչպէս անգութ որսորդը վէրքեր տալով նոցա՝ մէկի ոտներն է կարատում, միւսի թևերը և ապա հաւաքում է, լցնում իւր անիծեալ պայուսակը: Դեռ այս մարդիկը որոնք իրանց քրիստոնեայ են անուանում խօսում են գթութեան ու կարեկցութեան վերայ:

— Ոչ տիրուհի, նոցա կողմից այդ միայն կեղծաւրութիւն է: Իմ կարծիքով աղուէն առաւել լաւ է վարվում: « Եա աւազակութիւն է անում ոչ թէ իւր զուարձութեան համար, այլ հանգանանքներից ստիպուած, մի և նոյն ժամանակ նա չէ քողարկում իւր գոր-

ծունէութիւնը քրիստոնէական դժութեան գիմակով:

— Ազուէսի հետ դեռ կարելի է կառավարուել, — տրտում պատասխանեց կաքաւը: — Ի հարկէ, եթէ յարմար դէպք լինի, աղուէն էլ մեզ ձեռքից բաց չի թողնիլ բայց նա լաւ է համարում այստեղ ընտանի հաւեր որսալ: Գոնէ նա կարող է վստահ լինել որ այնտեղ կուշտ կերակուր կրգտնէ:

Աքաւը մըջնի մի բոյն նկատեց, սկսաւ քրքրել ու կանչել իւր ձագուկներին մըջնի ձուեր անուշ անելու:

— Չեր բնակութեան տեղը շատ գեղեցիկ է, — ասաց խոճքորը խօսակցութիւնը շարունակելու նպատակով:

— Կա մանաւանդ գեղեցիկ են անտառապետի ագարակի ուղիները, ինչտեղ բողիկի մարդեր կան: Կյանտեղ ձեմելը և օգտաւէտ է, և՛ հաձելի, — ցաւելով պատասխանեց կաքաւը: — Վատ չեն լինիլ և կողքի գաշտերը երբ ցորենը հասնի: Եսիսոս որ այդ բոլորի մէջ գտնվում է որսորդը իւր պայուսակով, հրացանով ու շնով, որպէս մի աշարկու թշնամի:

Հնաց որ բանի մէջ խառնվում է մարդը, մեր՝ թշուառ կաքաներիս բանը շատ վատանում է, ցորենի առատ գաշտերումն անզամ:

Թափ տալով փետուկները, նս կանչեց իւր ձագուկներին և տարաւ գէպի անտառի պահակը:

Արձ միջոցից յետոյ նոցա առջեկց այնպէս սրբնթաց վազեց մի նապաստակ, որ խոճքորը չկարողացաւ նորա հետ խօսք քցել:

— Կապաստակի բանն էլ վատ է. համամարեա այնքան էլ վատ է, որքան և իմը, — մնչեց աղաւնին: — Թէպէտ այդ խեղճերը իւրանց այդքան համեստ ու խաղաղ են պահում, կրկին ողջ տարին նոցա հալածում են թէ ձիւառը և թէ գետեակ որսորդները. հրացանն են արձակում, շներ են բաց թողնում նոցա վերայ...: Ի՞այց նապաստակը լաւ կենդանի է: Խոստովանում եմ, ես մեծ ուրախութեամբ եմ նայում նորա վերայ, երբ արևածագին յետին թաթիկների վերայ նստած նա մաքրում է և գեղեցկացնում իրան: Անկասկած, շատ տարօրինակ կրլիներ, եթէ պացանով ու շնով, որպէս մի աշարկու թշնամի:

Հանջեին մարդկանց պէս կոպիտ արարածներից զգալ ու հասկանալ այդպիսի մի բան:

— Իսկ դուք, տիրուհի, ի՞նչ կարծիք ունիք մարդկանց մասին, — հարցրեց խոճքորը չալ կովից, որ մօտենում էր անտառը շրջապատող ցանկին:

— Աւ է նոցա մասին չխօսէք էլ — զրգոհոհ ու բարկացած բառանչեց կովը: — Նոքա մորթեցին իմ բոլոր անմեղ որդկերանց, կարմրած երկաթով դաղղեցին մորթիս, բաժանեցին ընկերներիցու, տարան շուկան և գորանից մի օր առաջ էլ չկթեցին, որպէս զի առաւել շատ ձեռք բերեն նզովեալ փողեց, որի համար նոքա միշտ պատրաստ են իրանց հոգին ծախել: Յետոյ ծիծս ուռեց և սաստիկ ցաւեց ես հազիւ էի կարողանում ոտներս փոխել: Քանի ես ջաշիւ եմ, նոքա ինձ կերակրում են իրանց շահի համար. իսկ երբ մեծանամ, նոքա ինձ պիտի ծախեն մասվաճառին մորթելու համար:

— Յայտնի բան է, — խանչեց խոճքորը, հաստատելով կովի ասածները և մէջքը ծառի կեղեւին քսելով: — Դեռ փոքր ժամանակս ես յաճախսակի լսում էի բակումբաց պատու-

հանից, ինչպէս տիրոջս որդիքը բոլոր կինդանիների մասին կարդում էին իրանց դասագրքերում: Կյնտեղ ես իմացայ մեր լատիներէն անունները և ուրիշ անոպէտք բաներ, բայց մի և նոյն ժամանակ միջոց էլ ունեցայ խրատական բաներ իմանալու: Խս զիտեմ, որ մասվաճառը կայնի մի հարուածով ձեզ շշմեցնելու է, յետոյ զլորելու է և մորթի, խրելով սուր դանակը պարանոցիդ մէջ կըկտրէ ձեր մէջքի ուղեղը հէնց այնտեղ ինչտեղ նա միանում է գլխի ուղեղի հետ: Զեր մնի մի մասը կ'ուտեն, մի մասն էլ կըդնայ ուրիշ բաների: Մարդիկ կըկարողանան օգուտ քաղել մինչև անդամ ձեր մորթուց, պողերից ու կճզակներից: Կյու պատճառով էլ մանկական դասագրքերում ասած է, թէ կովը նույն կենդաններն ամենածագութակացն է: Զեղ մնում է միայն խոնարհել ձեր գլուխը և նորհակալ լինել:

Կովը պատասխանեց միայն խուլ բառանելով:

— Տեսնում էք, բարեկամ, — շարունակեց խոճքորը, զիմելով հաղու աքաղաղին, — մարդու բոլոր կենդանիներին պէտքական է համարում

իւր անկուշտ փորի համար: Խնչպէս կարո-
ցաք կարծել, որ նորա համար դուք բացա-
ռութիւն էք կազմում:

— Ձէ՞ որ ոչ ոք այսպիսի գեղեցիկ պոչ
չունի, — պատասխանեց Հնդու աքաղաղը:

Փոքր ինչ սիրտ առնելով՝ նա կրկն այն
համոզունքին եկաւ, թէ այսպիսի զարմա-
նալի պոչ ունեցող թռչունը կարող է լինել
միայն ընդհանուր երկրագութեան առարկան:

— Ի՞նչ էք այդքան հպարտանում ձեր
պոչով — բարկացած խանչեց խոճքորը, — ձեր
պոջ սիրամարդի պոջ առաջ ոչնչ է: Ձեր
անմիտ հպարտութեամբ դուք միայն ձեր տը-
զիտութիւնն էք ցոյց տալիս:

— Ուրեմն ձեր ասելով մարդիկ սիրամարդ-
ներ էլ են ուտում, — հարցրեց Հնդու ա-
քաղաղը:

— Ու կարծեմ, նոցա այժմ էլ չեն ուտում,
— պարզ խոստովանեց մեր փիլիսոփայ-խողիկը,
թէպէտ զգում էր, որ պարզ խօսելով հեր-
քում է իւր ասածները: Իսայց և ոչ ոք, ով
որ էլ լինէր մեր խոճքորի տեղը, չէր հետեւիլ
նորա օրինակին:

— Հապա մարդիկ ինչո՞ւ համար են կե-
րակում սիրամարդներին, — հարցրեց Հնդու
աքաղաղը:

— Կոցա հիանալի պոջ համար, — անկեղծ
պատասխանեց խոճքորը:

— Էնց այդ էր իմ ուղածը, — խրոխտ բա-
ցականչեց Հնդու աքաղաղը, և պոջ շըջա-
նաձև ծաւալելով՝ զղլացրեց, որքան ոյժը պա-
տում էր. «Ես Մէկազրիս Գալօպավօն եմ,
Ես Մէկազրիս Գալօպավօն եմ» :

Հնդու աքաղաղը, որ հինգ բովէ առաջ մի-
այն խմացաւ իւր այդ ազնիւ անունը, այնպէս
սկսաւ հպարտանալ ասես թէ այդ անունն էին
տալիս նորան ամբողջ կեանքում: Կյապիսի
դէքը եր պատահում են և մարդկանց հետ:

Հնդու աքաղաղը վիզը գուրս ցցեց, կա-
խեց իւր կարմիր աղեքը, սկսաւ պտտուել,
որպէս զի ամեն կողմից իրան լաւ տեսնէ,
զուարձանայ, և այնպէս փքուեց, կարծես,
թէ պոջ կարդոնից լինի շինած:

— Ես Մէկազրիս Գալօպավօն եմ, —
զիլ ձայնով ձաց և ուրախութիւնից սկսաւ
գետինը փորել մազիներով:

Յանկարծ օդում մի բան երևեցաւ և խուլ հարուածով հնդու աքաղաղին զիսպաւ։ Փայտի հարուածից մեր հնդու աքաղաղը շնչասպառ փռուեցաւ արօտի վերայ Ճմռտուած ու խառնափնդոր փետուրներով։ Մաշուան ճրդնաժամին նա ողջ մարմնով ցնցվում էր ու թաւալրում գետնի վերայ, սակայն դորան վերջ դրեց մի շուն, ատամներով բռնելով նորա կոկորդից։

— Այ քեզ երջանկութիւն, — ասաց կովը խոր ընկերոջ, որ եկել էր անտառ, թէպէտ և խստիւ արգելել էին, յուսալով որ ուտելու մի բան կրգանէ։ — Եյս թռչնի համար պանդոկում անշուշտ մի բուբլե կրտան, մինչև անդամ, երեխ, մի գաւաթ, օղի էլ կրերեն հետ։ — Յիշ — Փիդէլ ցից։ Անպիտան, ի՞նչ ևս դորան գզգզում, բացականչեց ապանողը, անդրթաքար ծիծաղելով ու խլերով շնից խեղճ Մէլքաղիս Գալքօպավոյին և ձգելով ուսից կախած մեծ պայուսակի մէջ։

Խոճքորը լսելով Փիդէլն, փախաւ-մտաւ թփերի մէջ և բարձր արօտների խորքում թաղ կացաւ։ Մեր փիլխոփայի տեղու

դորշ գյոնի շնորհիւ ամենամօտ տարածութիւնից անդամ կարելի էր նորան հասարակ փայտի կտորի աեղ ընդունել։ Եյդպէս նա աննկատելի մնաց։

— Ես գիտեի, որ այդ անիծեալ պոչը դորա գլուխը կ'ուտէ, — տիսուր խանչեց խոճքորը, նայելով որսորդի յետելից, որ տանում էր թշուառ հնդու աքաղաղին։

Այդ դէպքից յետոյ նա առանձին բաւականութեամբ էր նայում իւր դժգոյն ու գորշ պոչը վերայ, որ անտառում կարելի էր չոր ճիւղի տեղ ընդունել։

Ես մի բան միայն պիտի աւելացնեմ, որ այդ խորհրդաւոր անտառի տիրուհին, մի մատաղահաս, սիրուն աղջիկ, գալիս է սունկ հաւաքելու։ Ակըսում խոճքորը նորանից թաքէ է կենում արօտի մէջ, բայց յետոյ աղջկայ ապշեցուցիչ դէմքը այնքան գլաւում է նորան, որ նա, հաւատ ընծայելով, ոչ միայն գուրա է գալիս իւր ապաստանից, այլ և ցըց է տալիս նորան գեղեցիկ գետնախնձորների տեղը։ Դարս փոխարէն աղջիկը տալիս է նո-

բան իսնձոր, առնում է հետը, տանում տուն
և տեղաւորում առանձին գոմում, ինչտեղ նո-
րան մեծ յարդանքով են պահում, և ոչ ու-
րիշ խոզերի պէս: Այսու ամենայնիւ նա միշտ
ցաւակցութեամբ էր յիշում խեղճ հնդու ա-
քաղաղի թշուռ վիճակը և հաստատ վճռեց
ապագայում այլ ևս չասել հնդու հաւերին,
որ ուսումնականները նոցա Meleagris Gallo-
pavo են անուանում:



«Ազգային գրադարան



NL0249848

«Ազգային գրադարան



NL0249847

«Ազգային գրադարան



NL0249846

